ՀՀ նախարարների խորհրդին առընթեր
եկեղեցու գործերի խորհուրդ
պրն Սուջյանին

«Լրագիր Օր» օրաթերթի ս. թ. հունվարի 18, 19, 20-ի համարներում տպագրվեց տողերիս գրողի «Թվում է, թե օդում կախված գմբեթը հենարան չունի» վերտառությամբ հարցազրույցը, որով ընթերցողներին հայտնի դարձրի իմ կարծիքը, որ Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետական բաժնի և մրցույթի հանձնաժողովի հավանությանն արժանացած Երևանում կառուցվելիք Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար կազմված Ստ. Քյուրքչյանի նախագիծը հայ եկեղեցու նախագիծ չէ և որ այդ նախագծով մայրաքաղաքում Մայր տաճար կառուցել չի կարելի:

Ինձ ստույգ հայտնի է, որ այդ նախագիծը չի գոհացրել ինչպես հանգուցյալ կաթողիկոս Վազգեն Ա-ին, այնպես էլ մեր նորընծա կաթողիկոս Գարեգին Ա-ին: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն հնարավորություն չի գտնում այդ նախագծից ուղղակի հրաժարվելու համար, քանի որ նախագծի վրա առկա է նախորդ կաթողիկոսի ստորագրությունը նախագծին համաձայնելու վերաբերյալ, ինչ փույթ, թե այդ տեղի է ունեցել նրա ծանր հիվանդության օրերին:

Այդ որոշակի դժվարություն ներկայացնող իրավիճակը հաղթահարելու համար երկու միջոց կա թերևս: Մեկն այն է, որ կարելի է հայտնել, որ կառուցման համար տեղի նոր տարբերակ է առաջարկված: Մյուսն այն է, որ Գարեգին Ա կաթողիկոսին հայտնի լինի, որ դեռևս 1989 թ. Վազգեն Ա կաթողիկոսը մեծ ցանկություն էր հղացել Գրիգոր Լուսավորիչը կառուցել Զվարթնոցի ճարտարապետությամբ և, որ նրա հանձնարարությամբ իր ճարտարապետական բաժինը մասնագիտորեն նայել և հավանության էր արժանացրել Վեհափառի որոշումը: (Այս վերջինս հավաստելու համար ներկայացնում եմ ճարտարապետական բաժնի նիստի մասնակիցների լուսանկարը, կատարված 1989 թ.):

Նկ. 1 *– Ճարտարապետական բաժնի նիստի մասնակիցները (նրանց թվում են՝ Վարազդատ Հարությունյանը, Գրիգոր Խանջյանը, Արծրուն Գալիկյանը, Գրիգոր Ղաֆադարյանը, Բաղդասար Արզումանյանը և նախագիծը ներկայացնող՝ Տիրան Մարությանը)*

Նկ. 2 *– Տիրան Մարությանը՝ Զվարթնոցի ճարտարապետությամբ կառուցվելիք սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նախագիծը ներկայացնելիս:*





Նկ. 3-4 *– Նախագծի քննարկման ընթացքից:*

Հետագայում նույն բաժնի անդամներից մի քանիսի ջանքերով իրենց իսկ որոշումը անտեսվեց, այսինքն՝ հրաժարվեցին հանճարեղ գլուխգործոց Զվարթնոցից, ցանկացան ստանալ առավել լավ, ժամանակակից նախագիծ:

Հայտնի բան է, որ արվեստի այն ստեղծագործությունները, որոնք ընդունվում, իրավամբ համարվում են գլուխգործոցներ, չեն ծերանում, բոլոր ժամանակներում

պաշտպանում են իրենց թարմությունը և առաջվա պես մնում ժամանակակից: Այդպիսին է նաև Զվարթնոցը. մեր օրերում ևս, ինչպես և 7-րդ դարում, Զվարթնոցի ճարտարապետությունը ժամանակակից է: Ակադեմիկոս Թամանյանի «Ժողտունը»՝ հորինվածքով, Կառավարության տունը՝ պլաստիկ ճարտարապետությամբ, Մազմանյանի, Մարգարյանի «Գրքի պալատը»՝ իր սյունաշարով, Սաֆարյանի, Իսրայելյանի, Աղաբաբյանի, Գևորգ Թամանյանի գործերի մշակումները գալիս են Զվարթնոցից: Սբ. Գրիգոր Լուսավորչի նախագծի մրցույթի 33 նախագծերից 70-80 տոկոսը այս կամ այն կերպ կրում էին Զվարթնոցի հզոր ազդեցությունը զանազան տարբերակներով:

Ասելիքս այն է, որ «հնառճի ուրվականով» վախեցնելը սարքովի, կանխամտածված միջոցառում է, պախարակելի գործելակերպ:

Ուժից վեր է պատկերացնել, թե որևէ հայ մարդ կարող է իր կամքով հրաժարվել Զվարթնոցը կանգուն տեսնելու հնարավորությունից: Ներկա հնարավորությունը կորցնելը պատմությամբ չի ներվի:

Արդ, խնդրում եմ Ձեր ուժերի հնարավորությամբ օգնեք մեր սիրելի Վեհափառ հայրապետին վճռաբար հրաժարվելու Ստ. Քյուրքչյանի նախագծից և կաթողիկոսական կոնդակ արձակելու սբ. Գրիգոր Լուսավորիչը Զվարթնոցի ճարտարապետությամբ կառուցելու վերաբերյալ: Այդպիսի որոշումը կլինի առհավատչյա, որ եկեղեցին կկառուցվի ժամանակին, որ այն կգոհացնի գործի տերերին և կհավերժացնի նրանց:

Տիրան Մարության

Ճարտարապետության դոկտոր,
Հայաստանի վաստակավոր շինարար,
ճարտարապետության համաշխարհային
Բիենալեի (Սոֆիա, 1991) դափնեկիր